ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

Ընդհանուր բաժին
№ 0348
08 FEB 2021
Կից Նշում

«05» փետրվար 2021թ. No 335 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ՊԱԳ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԺԱՄԿԵՏՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվի առնելով ՀՀ-ում COVID-19 կորոնավիրուսային համավարակի հետ կապված իրավիճակում ՊԱԳ դիտարկումների իրականացման դժվարությունները և ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 199-Ն որոշման հավելված 2-ի 10-րդ կետը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետությունում դեղեր արտադրողներին 2019-2020թթ տրամադրված ՊԱԳ հավաստագրերի գործողության ժամկետ սահմանել մինչև 2021թ. հունիսի 30-ը, բացառությամբ այն հավաստագրերի, որոնց գործողության ժամկետը լրանում է 2021թ. հունիսի 30-ից հետո:
2. Սույն թվականի փետրվարի 1-ից վերսկսել արտադրատարածքներում ժամանակավորապես դադարեցված դիտարկումներ իրականացնելը:
3. Հայաստանի Հանրապետությունում դեղերի պետական գրանցման և կլինիկական փորձարկումների թույլտվության նպատակով իրականացվող փորձաքննությունների ընթացքում օտարերկրյա պետությունների դեղերի ոլորտը կարգավորող կառույցների կողմից տրամադրված դեղերի պատշաճ արտադրական գործունեության համապատասխանության հավաստագրերը, որոնց գործողության ժամկետները լրացել են 2020 թվականի մարտի 11-ից հետո համարել վավեր՝ տվյալ երկրի դեղերի ոլորտը կարգավորող կառույցի

Մուտք. 08.02.21 ժ. 09[40] Ա.

կողմից տրված համապատասխան փաստաթղթում ամրագրված ժամկետներով:

4. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին՝ ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:
5. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Առողջապահության նախարարի տեղակալ Արտյոմ Սմբատյանին:
6. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ

05.02.2021

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157